

Հավելված  
ՀՀ կառավարության 2026 թվականի  
մայիսի 14-ի N 673-Ա որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ ՈՒ Խ Ի

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կատարման մասին սույն հաշվետվությունն (այսուհետ՝ հաշվետվություն) ընդգրկում է 2025 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

2. Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների ամփոփում: Միաժամանակ, ծրագրի 2024-2025 թվականների ընթացքում մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման արդյունքները և դրամական մուտքերը գնահատելու համար կից ներկայացվում է եկամտային հոսքերի վերաբերյալ 2024-2025 թվականների (31.12.2024 թ.-31.12.2025 թ.) դրամական մուտքերի համեմատականը.

հազար հայկական դրամ

Հ/Հ	Վաճառքի ձևը	Ընդամենը 31.12.2024 թ.	Ընդամենը 31.12.2025 թ.	Տարբերությունը	Աճը կամ նվազեցումը
	Ընդամենը մուտքեր, այդ թվում՝	18,677,194.7	12,290,701.5	-6,386,493.2	-34.19%
	պետական բյուջեի մուտքեր	16,905,188.9	10,962,558.1	-5,942,630.7	-35.15%
	համայնքային բյուջեի մուտքեր	1,531,974.8	1,088,397.4	-443,577.4	-28.95%
	ՊՈԱԿ-ներ	240,031.0	239,746.0	-285.0	-0.12%

1.	Պետական գույքի՝ այդ թվում նաև հողի օտարումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	17,197,009.5	10,906,128.5	-6,290,881.0	-36.58%
պետական բյուջե		15,759,752.3	9,818,290.0	-5,941,462.3	-37.70%
համայնքային բյուջե		1,437,257.2	1,087,838.5	-349,418.7	-24.31%
2.	Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	321,688.8	8,100.6	-313,588.2	-97.48%
պետական բյուջե		226,971.2	7,541.7	-219,429.5	-96.68%
համայնքային բյուջե		94,717.6	558.9	-94,158.7	-99.41%
3.	Պետական գույքի վարձակալությունից մուտքեր՝	848,057.6	1,060,406.4	212,348.9	25.04%
4.	Շենքերի և շինությունների տանիքների ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	313,512.1	318,879.8	5,367.7	1.71%
պետական բյուջե		70,407.9	76,320.0	5,912.1	8.40%
ՊՈԱԿ-ներ		240,031.0	239,746.0	-285.0	-0.12%
չբաշխված գումար		3,073.2	2,813.8	-259.4	-8.44%

Ամփոփում. վերը նշված ուղղություններով ստացված դրամական միջոցները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 12,290,701.5 հազար հայկական դրամ, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել 10,962,558.1 հազար հայկական դրամ:

3. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

4. Պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ոլորտում 2025 թվականին ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունվել է թվով 21 իրավական ակտ, մասնավորապես՝

1) 2025 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-85-Ն օրենքը (փոփոխության արդյունքում պետական կամ ենթակա պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին հանձնված (ամրացված)՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերը նվիրատվության և անհատույց օգտագործման է տրամադրում պետական գույքի կառավարման լիազոր մարմինը)։

2) 2025 թվականի հոկտեմբերի 22-ի «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՕ-340-Ն օրենքը։

3) 2025 թվականի հոկտեմբերի 22-ի «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-339-Ն օրենքը (մասնավորեցման ենթակա ընկերությունների ցանկում է ավելացել «Ռիփարիք Պլազա» ԲԲ ընկերությունը)։

4) 2025 թվականի հոկտեմբերի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-343-Ն, «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-344-Ն, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-346-Ն, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-345-Ն, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-348-Ն, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-349-Ն և «Կառավարչական

իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-347-Ն օրենքները (փոփոխության արդյունքում պետական մարմիններին և կազմակերպություններին տարածքներն այսուհետ տրամադրվելու են վարձակալության իրավունքով)։

5) 2025 թվականի դեկտեմբերի 17-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Վարչապետի N 1171-Ա որոշումը։

6) 2025 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Վարչապետի N 324-Ա որոշումը (արդյունքում Պետական գույքի կառավարման կոմիտեի հաստիքներն ավելացել են 6-ով)։

7) 2025 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Վարչապետի N 564-Ա որոշումը։

8) 2025 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2102-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Կառավարության N 478-Ն որոշումը (արդյունքում ուղղակի ձևով պետական գույքի մասնավորեցման, օտարման կամ օգտագործման տրամադրման մասին համապատասխան

իրավական ակտերով սահմանված ներդրումների չափը և կատարման ժամկետները բավարար իրավական և տնտեսական հիմնավորման առկայության դեպքում կարող են փոփոխվել՝ կոմիտեի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ: Ընդ որում, փոփոխման են ենթակա միայն այն ներդրումները, որոնց չկատարման համար հաշվարկված տուգանքները արդեն իսկ վճարվել են):

9) 2025 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 595-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 543-Ն որոշումը (Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ սպորտի, կրթության կամ մշակույթի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրեր ներկայացրած սուբյեկտներին մի շարք դեպքերում կարող են տրամադրվել ժամկետային առավելություններ):

10) 2025 թվականի մայիսի 22-ի «Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Կառավարության N 642-Ա որոշումը:

11) 2025 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2057-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 783-Ն որոշումը (արդյունքում որոշմամբ սահմանված վարձակալության ժամկետները երկարացվել են):

12) 2025 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2037-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Կառավարության N 1180-Ն որոշումը (արդյունքում Պետական գույքի կառավարման կոմիտեն իրականացնելու է նաև բոլոր պետական մարմիններին ամրացված բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը):

13) 2025 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության N 1236-Ն որոշումը (արդյունքում սահմանված ժամկետները երկարաձգվել են):

14) 2025 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության N 1375-Ն որոշումը (ապահովվել է օրենսդրական ակտի կիրարկումը).

15) 2025 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 1832-Ն որոշումը (փոփոխությամբ ամբողջությամբ բարեփոխվել է էլեկտրոնային աճուրդի գործընթացը).

16) 2025 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 1822-Ն որոշումը (փոփոխությամբ հստակեցվել է պետական գույքի օտարման գործընթացը, հստակ սահմանվել են գնիջեցումները).

17) 2025 թվականի սեպտեմբերի 25-ի «Հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» Կառավարության N 1351-Ա որոշումը, որով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 6 բնակելի տարածքներ (5 ընտանիքների, 16 անձանց).

18) 2025 թվականի ապրիլի 30-ի «Հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» Կառավարության N 513-Ա որոշումը, որով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 14 բնակելի տարածքներ (13 ընտանիքների, 36 անձանց).

19) 2025 թվականի ապրիլի 17-ի «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» Կառավարության N 442-Ա որոշումը, որով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 3 բնակելի տարածքներ (2 ընտանիքների, 6 անձանց).

20) 2025 թվականի նոյեմբերի 20-ի «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» Կառավարության N 1638-Ա որոշումը, որով առաջարկվել է նվիրատվությամբ տրամադրել 2 բնակելի տարածքներ (2 ընտանիքների, 4 անձանց).

21) 2025 թվականի նոյեմբերի 27-ի «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» Կառավարության N 1676-Ա որոշումը, որով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 10 բնակելի տարածքներ (10 ընտանիքների, 16 անձանց):

## Գ Լ ՈՒ Խ II

## 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

5. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար ծրագրով նախատեսվել էր հստակեցնել կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը:

6. Ծրագրի N 1՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնետնասերով) առևտրային կազմակերպությունների» ցանկում նշված միջոցառումների մասով՝ Կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1930-Ա որոշմամբ ընդունվել է «Կանթեղ շաքաթաթերթ» ՓԲԸ-ն լուծարելու մասին որոշումը:

7. Ծրագրի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված միջոցառումների մասով կատարվել է հետևյալը.

1) ծրագրի N 2՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող անշարժ պետական գույքի» ցանկում նշված միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ա. Կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման կատարման շրջանակներում 2025 թվականին Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տնօրինությանն է հանձնվել 23 միավոր անշարժ գույք,

բ. Կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն 2025 թվականին իրականացված մշտադիտարկման աշխատանքների արդյունքում՝ պետական սեփականություն հանդիսացող՝ չօգտագործվող (ազատ) կամ ոչ արդյունավետ օգտագործվող տարածքներ են բացահայտվել թվով 87

հասցեներում, մասնավորապես՝ շուրջ 9.5 հեկտար հողամաս և շուրջ 65.000 քառակուսի մետր մակերեսով, ինչպես ազատ մասնաշենքեր, այնպես էլ մասնաշենքերում ազատ տարածքներ: Նույն որոշմամբ սահմանված կարգի համաձայն հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման աշխատանքների արդյունքում արձանագրվել են թվով 124 խախտումներ և թերություններ, որոնց վերացման կամ շտկման ուղղությամբ իրականացվել են համապատասխան աշխատանքներ:

8. Հաշվետու ժամանակաշրջանում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքով հաստատված N 1 ցանկում՝ այդ թվում ծրագրի N 3՝ «Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և/կամ լուծարման առաջարկելու ժամկետների» ցանկում ընդգրկված ընկերություններից՝

1) Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Արմենիկում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու, կոմիտեին գույք ամրացնելու և «Արմենիկում» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2025 թվականի փետրվարի 21-ի նիստի N ԿԱ/60-2025 արձանագրության 8-րդ կետով՝ նախագծին տրվել է դրական դիրքորոշում՝ նախագծից «Արմենիկում» ՓԲԸ-ի մասնավորեցմանն առնչվող դրույթները հանելու և ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց 37 հասցեում գտնվող անշարժ գույքը կոմիտեին ամրացնելու պայմանով, եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (Գլխավոր դատախազությունը) հավաստի, որ այն չի խոչընդոտի ընթացող քրեական գործին: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դիրքորոշումը՝ «Արմենիկում» ՓԲԸ-ի մասնավորեցման կամ լուծարման հարցերին հնարավոր կլինի անդրադառնալ քրեական վարույթով նախաձեռնված քննության ընթացքում խոչընդոտները վերանայուց հետո:

2) մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության՝ «Հանրապետական անձավաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը աճուրդային եղանակով մասնավորեցնելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվել է Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 615-Ա որոշմամբ: Որոշմամբ սահմանվել է, որ մինչև 2026 թվականի հոկտեմբերի 22-ը կազմակերպել և անցկացնել էլեկտրոնային աճուրդներ՝ մեկնարկային գինը թողնելով անփոփոխ: 2026 թվականի մարտի 23-ի դրությամբ կազմակերպվել է թվով 9 աճուրդ, որոնք չեն կայացել՝ հայտ չլինելու պատճառով:

3) «Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը հանձնվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Կատարվել է բաժնետոմսերի հանձնում-ընդունում:

4) «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը հանձնվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը: Կատարվել է բաժնետոմսերի հանձնում-ընդունում:

5) մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որը լրացուցիչ ուսումնասիրության նպատակով հանվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում, իրականացվում են հողամասի ճշգրտման աշխատանքներ:

9. Ծրագրի N 4՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց» ցանկում ընդգրկված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվության N 1 ցանկով: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում՝ աճուրդային եղանակով օտարվել

է 3 անվանում գույք, 4 գույք ներկայացվել է օտարման աճուրդային եղանակով, սակայն չեն օտարվել՝ հայտեր չլինելու պատճառով, 1 գույք Կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի N 484-Ա որոշմամբ ամրագրվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությանը: 1 գույք Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2130-Ա որոշմամբ ամրացվել էր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը, իսկ Կառավարության 2026 թվականի մարտի 12-ի N 264-Լ որոշմամբ (ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2025 թվականի մայիսի 13-ի նիստի N ԿԱ/143-2025 արձանագրության 9.1-րդ կետով կատարված առաջարկություն) այն հանվել է (77-րդ կետը) ծրագրի N 4 ցանկից:

10. Ծրագրի N 5՝ «Պետական գույքի վարձակալությունից սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկով՝ 2025 թվականին պետական բյուջե ծրագրով կանխատեսվող (սպասվելիք) դրամական մուտքերը սահմանվել են 852,043.8 հազար հայկական դրամ, մինչդեռ, 2025 թվականին վարձակալությունից պետական բյուջե է մուտքագրվել 1,060,406.4 հազար հայկական դրամ: Այլ կերպ՝ կատարողականը 2025 թվականին կանխատեսվածի նկատմամբ կազմել է 124%: Իսկ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված 848,057.6 հազար հայկական դրամի համեմատ աճել է 25.04%-ով:

11. Ծրագրի N 6՝ «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկի նախատեսվածի կատարողականը հետևյալն է՝ շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի ծառայություններից վարձավճարները ծրագրով 2025 թվականի համար սպասվելիք (կանխատեսվող) դրամական մուտքերը սահմանվել են 343,000 հազար հայկական դրամ, մինչդեռ, 2025 թվականին պետական բյուջե մուտքագրված գումարը կազմել է 318,879.8 հազար հայկական դրամ (2024 թվականի նույն ժամանակահատվածում մուտքագրվածի՝ 313,512.1 հազար հայկական դրամի համեմատ աճել է 1.71%-ով), որից՝ 76,320.0 հազար հայկական դրամը մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (այդ թվում՝ այլ կառավարչական հիմնարկների

արտաբյուջեներ), ինչը 2024 թվականի նույն ժամանակահատվածում մուտքագրվածի՝ 70,407.9 հազար հայկական դրամի համեմատ աճել է 8.40 %-ով, իսկ համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 239,746.0 հազար հայկական դրամ, ինչը 2024 թվականի նույն ժամանակահատվածում մուտքագրվածի՝ 240,031.0 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 0.12 %-ով:

12. Ծրագրի N 7՝ «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի (2024-2026 թթ.) ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունները» ցանկում ընդգրկված, գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 2 ցանկով: Հաշվետու ժամանակահատվածում՝ կից N 2 ցանկով ներկայացված պարտավորությունները կատարվել են թվով 38 պայմանագրերով, միաժամանակ՝

1) 7 մասնավորեցման պայմանագրերով ստանձնած պարտավորություններից՝ 5 պրոֆիլի պահպանման պարտավորություն կատարվել է (նաև 1 պայմանագրով նախատեսվել է ներդրումային պարտավորություն, որի վերաբերյալ ներկայացվել են փաստաթղթեր, սակայն տրամադրվել են միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը), 1 պայմանագրով պարտավորություն նախատեսված չի եղել և 1 պայմանագրով պարտավորությունը չկատարելու հետևանքով գործը գտնվում է դատական գործընթացում.

2) 6 պայմանագրերով (2 նվիրաբերության և 4 վարձակալության) նախատեսված պարտավորություններ չեն եղել.

3) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորություն գտնվում է դատական գործընթացում.

4) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման ժամկետ սահմանվել են 2024-2025 թվականները, սակայն ներդրումային պարտավորության կատարման ժամանակահատված է սահմանվել 2026 թվականը.

5) 2 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման ժամկետ է սահմանվել 2025 թվականը, սակայն կատարվել է 2024 թվականին.

6) 4 օտարման պայմանագրով տվյալ տարվա համար պարտավորություն նախատեսված չի եղել.

7) 2 օտարման պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունների կատարման վերաբերյալ ներկայացվել են փաստաթղթեր, որոնք ներկայացվել են միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը.

8) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորություն կատարվել է.

9) 31 անհատույց օգտագործման պայմանագրերով ստանձնած պարտավորություններ կատարվել են.

10) 2 անհատույց օգտագործման պայմանագրերով պարտավորության կատարման վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացվել.

11) 1 անհատույց օգտագործման իրավունքով տրված գույքի պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել, ինչի հետևանքով հաշվարկվել է տուգանք.

12) 4 անհատույց օգտագործման իրավունքով տրված գույքի պայմանագրերը լուծվել են.

13) 2 անհատույց օգտագործման իրավունքով ստանձնած պարտավորություններ կատարվել են ժամկետից շուտ.

14) 5 անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքերի նկատմամբ պարտավորություններ չեն սահմանվել.

15) 1 անհատույց օգտագործման պայմանագրով ներդրումային պարտավորություն կատարվել է.

16) 1 նվիրաբերության պայմանագիր լուծվել է.

17) 1 նվիրաբերության պայմանագրով պարտավորությունը կատարվել է 2024 թվականին.

18) 1 նվիրաբերության պայմանագրով նախատեսվել է 40,000.000 հայկական դրամի ներդրումային պարտավորություն, ներկայացվել են փաստաթղթեր, սակայն պահանջվել է անկախ գնահատողի գնահատման հաշվետվություն:

13. Ծրագրի N 7 ցանկում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծության հետ կապված՝ ծրագրով նախատեսված

միջոցառումների կատարման մասով Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված (հավելված N 1) կարգի համաձայն իրականացվել են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն 2024 թվականի տարեկան տվյալների հիման վրա: Վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են Վարչապետին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2) Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով՝ «Պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու» կարգի համաձայն կոմիտեն 2024 թվականի տարեկան տվյալների հիման վրա մոնիտորինգ է իրականացրել 139 կազմակերպությունների համար:

3) մոնիտորինգի ենթարկված 139 կազմակերպությունից՝ 96 կազմակերպություն (69,07%) աշխատել է շահույթով, 38 կազմակերպություն (27,34%) աշխատել է վնասով, 5 կազմակերպություն (3,59%) շահույթ (վնաս) չի ձևավորել:

4) 2024 թվականի գործունեության արդյունքում կազմակերպությունների կողմից ձևավորված ընդհանուր վնասը կազմել է 6,309,579.94 հազար հայկական դրամ, ընդ որում 2023 թվականի արդյունքներով՝ ընդհանուր վնասը կազմել է 8,078,445.462 հազար հայկական դրամ: Այսինքն, 2024 թվականին 2023 թվականի համեմատ ընդհանուր վնասը նվազել է 1,768,865.68 հազար հայկական դրամով (21,89%):

5) համաձայն ներկայացված տեղեկատվության՝ վնասը նախորդ տարվա համեմատ աճել է հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կազմակերպություններում՝ 810,171.7 հազար հայկական

դրամով, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կազմակերպություններում՝ 30,041.32 հազար հայկական դրամով և Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակողի խորհրդի կազմակերպություններում՝ 212,664.0 հազար հայկական դրամով: Վնասը նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ 2,889,478.4 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կազմակերպությունում՝ 18,577.4 հազար հայկական դրամով և Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում՝ 178,632.8 հազար հայկական դրամով:

6) 2024 թվականի տարեկան տվյալներով կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթը կազմել է 13,409,089.39 հազար հայկական դրամ, ընդ որում 2023 թվականի արդյունքներով ընդհանուր զուտ շահույթը կազմել է 13,744,936.26 հազար հայկական դրամ: Այսինքն, 2024 թվականին՝ 2023 թվականի համեմատ զուտ շահույթի ընդհանուր ծավալը նվազել է 335,846.87 հազար հայկական դրամով (2,44%): Զուտ շահույթի ծավալը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կազմակերպություններում՝ 774,315.0 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ենթակայության կազմակերպություններում՝ 137,591.5 հազար հայկական դրամով և Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակողի խորհրդի կազմակերպություններում՝ 478,833.0 հազար հայկական դրամով: 2024 թվականի ընդհանուր զուտ շահույթի ձևավորման մեջ գերակշիռ մաս է կազմում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կազմակերպությունների կողմից ձևավորված զուտ շահույթը: Զուտ շահույթի ծավալը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ աճել է, հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ 1,345,989.5

հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կազմակերպություններում՝ 18,497.4 հազար հայկական դրամով և կոմիտեի կազմակերպություններում՝ 22,323.8 հազար հայկական դրամով.

7) 2024 թվականի տարեկան տվյալներով՝ կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 254,904,398.69 հազար հայկական դրամ, աշխատակիցների թիվը կազմել է 23 571 մարդ.

8) 2024 թվականների տարեկան ֆինանսական արդյունքներով վնաս ձևավորած առևտրային կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացման և ձեռնարկված միջոցների վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված պարզաբանումների արդյունքում կազմվել է կազմակերպությունների գործունեության բարելավմանն ուղղված կոմիտեի առաջարկների վերաբերյալ տեղեկանք և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված (հավելված N 2) կարգի համաձայն՝ իրականացվել է կազմակերպությունների արդյունավետության որոշում, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տարեկան միջին տոկոսադրույքից, որը 2024 թվականի համար կազմել է 8,04%, ըստ իրացման ծավալի կամ ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության մակարդակից և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների դրական դինամիկայից: Գնահատման համար հիմք է հանդիսանում պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը.

10) թվով 139 կազմակերպություններից գնահատում իրականացվել է 121 կազմակերպության համար, որոնցից. 22 (15,7%) կազմակերպության արդյունավետության և գործադիր մարմինների ղեկավարների աշխատանքները գնահատվել են դրական, 6 (4,%) կազմակերպությանը՝ բավարար, 45 (32,1%) կազմակերպությանը՝ պայմանական բավարար և 48 (35,0%) կազմակերպությանը՝ անբավարար: Իսկ մնացած 18 կազմակերպության (12,9%) համար գնահատում չի իրականացվել՝ տեղեկատվության թերի լինելու պատճառով:

14. Ծրագրում ընդգրկված պետական գույքի մասնավորեցման գործարքների իրականացման արդյունքում դրամական մուտքերը 2025 թվականին կազմել են 8,100.6 հազար հայկական դրամ կամ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 321,688.8 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 97.48%-ով, որից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել 7,541.7 հազար հայկական դրամ կամ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 226,971.2 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 96.68%-ով, իսկ համապատասխան համայնքային բյուջե՝ 558.9 հազար հայկական դրամ, որը 2024 թվականի նույն ժամանակահատվածի 94,717.6 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 99.41 %-ով:

15. Հաշվետու ժամանակաշրջանում՝ պետական գույքի (այդ թվում նաև հողի) օտարումից ստացված միջոցները կազմել են 10,906,128.5 հազար հայկական դրամ կամ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 17,197,009.5 հազար դրամի համեմատ նվազել է 36.58%, որից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է մուտքագրվել 9,818,290.0 հազար հայկական դրամ կամ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 15,759,752.3 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 37.70%-ով, իսկ համապատասխան համայնքային բյուջեներ՝ 1,087,838.5 հազար հայկական դրամ կամ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 1,437,257.2 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 24.31 %-ով:

16. Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և կացարանով ապահովման ուղղությամբ կոմիտեի կողմից իրականացվում է պետական սեփականություն համարվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, որի նպատակն է բնակչության բնակարանային պայմանների բարելավումը և, սեփականության իրավունքի հաստատումով, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծումը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում՝ բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, այդ նպատակով պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի ավարտման ուղղությամբ նվիրատվությամբ (անհատույց սեփականաշնորհմամբ)

Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2037 որոշման պահանջների համաձայն ընդհանուր թվով տրամադրվել են 35 բնակելի տարածքներ՝ 32 ընտանիքների (78 անձանց), որոնց թվում են կոմիտեի կողմից մշակված և Կառավարության կողմից ընդունված հետևյալ իրավական ակտերը՝

1) «Հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» Կառավարության թվով 2 որոշումներ, որոնցով առաջարկվել է թվով 20 բնակելի տարածքներ սեփականաշնորհել այնտեղ բնակվող 18 ընտանիքների (52 անձանց)։

2) «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» Կառավարության թվով 3 որոշումներ, որոնցով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 15 բնակելի տարածքներ՝ 14 ընտանիքների (26 անձանց)։

## Ց Ա Ն Կ N 1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	NN (Ծրագրի հերթա- կան համարը)	Գույքի անվանումը	Գույքի հասցեն	Շենք, շինություն- ների մակերեսը (քառ. մետր)	Հողամասի մակերեսը (քառ մետր)	Լիազոր մարմնի անվանումը	Սեփակա- նության վկայական	Կադաստ- րային ծածկագիր	Օտարման ընթացքի վերաբերյալ
1.	14	Հողամաս	քաղաք Երևան, Մալաթիա- Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/2		16985.49	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01- 0389	01-007-0537- 0152	Կառավարության 13.02.2025 թ. N 152-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման աճուրդով, չի օտարվել հայտեր չլինելու պատճառով:
2.	15	Հողամաս	քաղաք Երևան, Մալաթիա- Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/5		48600	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01- 0348	01-007-0545- 0002	Կառավարության 13.02.2025 թ. N 152-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման աճուրդով, չի օտարվել հայտեր չլինելու պատճառով:

3.	16	Հողամաս	քաղաք Երևան, Մալաթիա- Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/7		9240	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	15092022-01- 0026	01-007-0545- 0007	Կառավարության 13.02.2025 թ. N 152-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման աճուրդով, չի օտարվել հայտեր չլինելու պատճառով:
4.	35	Շենք- շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Քասախ, Ռ. Սաֆարյան փողոց 10	2200.3	11 090	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17072023-07- 0175	07-065-0036- 0001	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային փաթեթ կազմելու համար:
5.	50	Գրասենյակ	քաղաք Երևան, Մյասնիկյան 43 ա	190	2 245,58	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17042023-01- 0254	01-006-0051- 0085	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային փաթեթ կազմելու համար:
6.	73	Ենթակայան/ ՊԳԿԿ	ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Բանակի փողոց 8-4	27.0	392.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	13082021-06- 0043	06-001-0455- 0182	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային փաթեթ կազմելու համար:
7.	74	Մասնաշենք/ ՊԳԿԿ	ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր,	1841.08	12399	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	13082021-06- 0044	06-001-0455- 0179	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային

			Բանակի փողոց 8-6						փաթեթ կազմելու համար:
8.	75	Մասնաշենք/ ՊԳԿԿ	ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Բանակի փողոց 8-1/2	2153.88	3300	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	28112022-06- 0002	06-001-0455- 0172	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային փաթեթ կազմելու համար:
9.	78	Հողամաս/ ՊԳԿԿ	քաղաք Երևան, Մալաթիա, Ծովակալ Իսակովի պողոտա 17/6		48298	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01- 0345	01-007-0537- 0153	Կառավարության 13.02.2025 թ. N 152-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման աճուրդով, չի օտարվել հայտեր չլինելու պատճառով:
10.	87	Վարչական շենք	ՀՀ Տավուշի մարզ, համայնք Իջևան, Աղայան 12	445.5	1300	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	30082019-11- 0006	11-001-0087- 0023	Կառավարության 23.04.2025 թ. N 484-Ա որոշմամբ ամրացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայությանը:
11.	91	Մասնաշենք/ ՊԳԿԿ	ՀՀ Լոռու մարզ, համայնք Վանաձոր, քաղաք Բանակի փողոց 8-8	2601.1	6249.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	28112022-06- 0003	06-001-0455- 0181	Ներկայացվել է «Դիգնիսի» ՍՊԸ-ին ներդրումային փաթեթ կազմելու համար:

12.	101	Շինություն/ ՊԳԿԿ	ՀՀ Սյունիքի մարզ, համայնք Կապան, գյուղ Վանեք, Տանձուտ թաղամաս 19	1747.6	4155.0, 175.4, 182.5, 2878.0, 596.4, 1426.0, 132.6	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	03102023-09- 0056	09-091-0104- 0002, 09-091- 0104-0003, 09-091-0101- 0003, 09-091- 0102-0002, 09-091-0106- 0001, 09-091- 0504-0001, 09-091-0502- 0002	Օտարվել է անուրդով 24.10.2025 թ. թիվ 519-Ա հրամանի համաձայն:
13.	102	Շինություն/ ՊԳԿԿ	ՀՀ Սյունիքի մարզ, համայնք Կապան, գյուղ Վանեք, Տանձուտ թաղամաս 20	930	8279.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	11102023-09- 0045	09-091-0107- 0002	Օտարվել է անուրդով 24.10.2025 թ. թիվ 519-Ա հրամանի համաձայն:
14.	104	Պոլիկլինիկա/ ՊԳԿԿ	ՀՀ Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մ. Օհանջանյան փողոց 4/1, պոլիկլինիկա	1368.6	0.0373 հա հողամասը հանդիսանում է ստորաբա- ժանված շենքի սպասարկման 0.0564 հա հողամասի բաժնային սեփականու- թյունում 1368.6 քմ տարածքի բաժինը	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	06072017-09- 0014	09-005-0029- 0017	Օտարվել է անուրդով Կառավարության 31.07.2025 թ. N 1062-Ա դրոշմամբ:

Ց Ա Ն Կ N 2

ՄԱՄՆԱՎՈՐԵՑՎԱԾ, ՕՏԱՐՎԱԾ, ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ, ՆՎԻՐԱՌՈՒՆԵՐԻ, ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ԾՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՄՆԱԿՎԱՀԱՏՎԱԾԻ (2024-2026 ԹԹ.) ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	Պայմանագրի տեսակը և համարը	Մասնավորեցված և օտարված, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների անվանումները կամ հասցեները	Ծրագիր իրականացողը	2024-2026 թթ. ընթացքում ներդրումների և այլ ծրագրերի իրականացման կանխատեսումներ	2025 թ.-ի կանխատեսում	2025 թ.-ին կատարված
<b>Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից ստանձնած պարտավորությունները</b>						
1.	225-Մ	քաղաք Հրազդան, Սպանդարյան փողոց	«Հրազդան» կինոթատրոն	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում	Պահպանվել է
